ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

« 14» 04 2011 թ. N 32

Լոռու մարզպետ
պարոն Ա.Քոչարյանին

Կից ներկայացնում ենք Լերմոնտովո համայնքի ղեկավարի թիվ 6 , 7 , 8 Որոշումները և համայնքի ավագանու թիվ 6 , 7 , 8 Որոշումները :

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«5» 04 2011թ.

ՈՐՈՇՈՒՄ N 6

Վաչիկ Օնիկի Դանիելյանին
աճուրդ-վաճառքով հողամաս օտարելու մասին

Հիմք ընդունելով Լերմոնտովո համայնքի աճուրդային հանձնաժողովի՝ հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու մասին 2011թ-ի ապրիլի 5-ի թիվ 01 արձանագրությունը, ղեկավարվելով Հողային օրենսգրքի 70րդ հոդվածի

Որոշում եմ՝

1. Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող 75քմ հողամասը (ծածկագիր 0023-0004) 20650 (քսան հազար վեց հարյուր հիսուն) դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված Վաչիկ Օնիկի Դանիելյանին՝ հասարակական կառուցապատման նպատակով:

2. Համայնքի հողօգտագործման բաժնին հանձնարարել 10օրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վաչիկ Օնիկի Դանիելյանի հետ կնքել հողամասի առ ու վաճառքի պայմանագիր:

3. Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:Պայմանագիրը մեկ ամսվա ընթացքում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման ներկայացնելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

Համայնքապետ՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 11 » ապրիլի 2011թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N - 7Ա

Լերմոնտովո համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով

Որոշում եմ՝

1. Հաստատել Լերմոնտովո համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի « 20 » ապրիլի 2010թ «Լերմոնտովո համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին » N-6Ա որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԱՎԱԳԱՆԻ

« 14 » 04 2011 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 2

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով կազմելու մասին

Ղեկավարվելով « Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թ-ի հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » ՀՀ կառավարության 2011 թ-ի փետրվարի 21-ի թիվ 164-Ն որոշմամբ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով համայնքի ավագանին որոշում է՝

1. Կազմել Լերմոնտովո համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.
   1.Ռոբերտ Սերյոժայի Վարդազարյան - նախագահ
   2.Միխաիլ Միխայլովիչ Գլազով - քարտուղար
   3.Անահիտ Ֆելիքսի Հարությունյան
   4.Աստղիկ Արմենակի Մկրտչյան
   5.Նադեժդա Պետրովնա Շուբինա
2. Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ավագանու 2010 թ-ի մայիսի 27-ի «Համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 13 որոշումը :

Ավագանու անդամներ՝	կողմ	ձեռնպահ	դեմ
Վահան Հովսեփյան			
Ալեքսեյ Շուտով			
Աստղիկ Մկրտչյան			
Իվան Բոլոտին			
Մոզա Խեչումյան			

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԱՎԱԳԱՆԻ

« 14 » 04 2011 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 8

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի
կազմակերպչական հարցերի մասին

- Համայնքի սանիտարական վիճակը բարելավելու նպատակով համայնքի ավագանին որոշեց գյուղի թաղամասերի հատուկ հատկացված վայրերում տեղադրել աղբարկղներ՝ որը նախատեսված էր համայնքի 2011 թ-ի բյուջեով:
- Համայնքի բնակչության հարմարավետության նպատակով տեղադրել ծածկականգառներ՝ որը նախատեսված էր համայնքի 2011 թ-ի բյուջեով:

Ավագանու անդամներ՝	կողմ	ձեռնպահ	դեմ
Վահան Հովսեփյան			
Ալեքսեյ Շուտով			
Աստղիկ Մկրտչյան			
Իվան Բոլոտին			
Ռոզա Խեչումյան			

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԱՎԱԳԱՆԻ

«14» 04 2011թ.

ՈՐՈՇՈՒՄ N 6

Համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 3րդ կետով Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2011թ-ի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

- բաժին 4 խումբ 5 դաս 1 ծրագիր 51 հոդված 5113-ից 320,0(երեքհարյուր քսան հազար)դրամ տեղափոխել բաժին 4 խումբ 5 դաս 1 ծրագիր 51ի 5112 հոդվածին՝ համայնքի տարածքում կանգառներ տեղադրելու համար
- բաժին 11 խումբ 1 դաս 2 ծրագիր 51 հոդված 4891-ից 20,0(քսան հազար)դրամ տեղափոխել բաժին 1 խումբ 1 դաս 1 ծրագիր 51ի 4233 հոդվածին՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար

Ավագանու անդամներ՝	կողմ	ձեռնպահ	դեմ
Վահան Հովսեփյան			
Ալեքսեյ Շուտով			
Աստղիկ Մկրտչյան			
Իվան Բոլոտին			
Ռոզա Խաչումյան			

Համայնքի ղեկավար՝ Է.Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

«11» 04 2017 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 8

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքում շտաբային
ուսումնավարժության անցկացման մասին

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի ս/թ մայիսի 26-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքում անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով:

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ համայնքի ղեկավարի տեղակալ, համայնքի ՔՊ շտաբի պետ Միխայիլ Գլազովին:

Շտաբը կազմավորել համայնքի ՔՊ ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային ՔՊ կապի և ազդարարման, տրանսպորտային, ինժեներական, բույսերի և կենդանիների պաշտպանության, բժշկական, հասարակական կարգի պահպանման ծառայություններին:

3. ՔՊ շտաբի պետին.

- մշակել և մինչև ապրիլի 26-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.
- ուսումնասիրել և ճշգրտել համայնքի «ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.
- համայնքային ՔՊ ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.
- նախապատրաստել ղեկավարման կետը.

- իրականացնել բնակչության ուսուցում՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում վարվելակերպի կանոնների մասին.

- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև մայիսի 11-ը:

4. Համայնքային ՔՊ ծառայությունների պետերին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների կանոնադրություններն ու խնդիրները:

2) կապի և ազդարարման ծառայության պետ Ելինար Մկրտչյանին՝ ապահովել կայուն և անխափան կապ ՔՊ ծառայությունների ու կազմավորումների հետ:

3) տրանսպորտային ծառայության պետ Պյոտր Բոլոտինին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ անկված խոզերին տեղափոխելու նպատակով.

4) ինժեներական ծառայության պետ Ռաֆայել Գալուստյանին՝ պատրաստ վիճակի բերել առկա ինժեներական միջոցները, անկված խոզերին թաղելու նպատակով.

5) բժշկական ծառայության պետ Մարիյա Գալիցինային՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.

6) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ Աշոտ Ղազարյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրները՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.

7) հասարակական կարգի պահպանման ծառայության պետ Իվան Բոլոտինին՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:

5. Ուսումնավարժության ղեկավարումն իրականացվելու է համայնքի կառավարման կենտրոնից:

6. Ուսումնավարժության անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՉԱԽԱԼՅԱՆ